ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՕԳՈՍՏՈՍԻ 2024թվականի N 1097-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2024Թ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Հայաստանի Հանրապետությա նբյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետով, Արմավիր համայնքի ավագանու 21.12.2023թ. թիվ 137-Ն որոշման 8-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 09 բաժնի 1 խմբի 1 դասում՝ «Նախադպրոցական կրթություն».

ա. «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Այգեվան գյուղի մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի ծախսերի նախահաշվի «Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին» 4511 հոդվածից 4861,6 հազար դրամը տեղափոխել «Հատուկ նպատակային այլ նյութեր» 4269 հոդվածին,

բ. «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Խանջյան գյուղի մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի ծախսերի նախահաշվի «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» 5113 հոդվածը պակասեցնել 3542,5 հազար դրամով, «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Այգեվան գյուղի մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի ծախսերի նախահաշվի «Վարչական սարքավորումներ» 5122հոդվածն ավելացնել 2405,0 հազար դրամով և «Այլ մեքենաներ և սարքավորումներ» 5129 հոդվածն ավելացնել 1137,5հազար դրամով :

2.Հայաստանի Հանրապետության Արամավիրի մարզի Արմավիր համայնքի ՀՈԱԿ-ների 2024 թվականի նախահաշիվներում կատարել համապատասխան փոփոխությունները:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2024 թ.օգոստոսի 26
ք.Արմավիր